ՔԱՂԱՔԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

16 հուլիսի 2009 թվականի N 29

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2008-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրի փորձնական փուլի արդյունքներին և Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման հետագա ընթացքի վերաբերյալ առաջարկություններին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. հուլիսի 21
Երևան

KQ005

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թ.
հուլիսի 16-ի նիստի N 29
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2008-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կարևորելով նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրները և համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ 2008 թվականի մարտի 13-ի նիստի N 10 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական և փորձնական ծրագրերին»:

Համաձայն ռազմավարական ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը:

Ռազմավարական ծրագրի շրջանակներում առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ հինգից մինչև վեց տարեկան երեխաներին տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը: Վերջինս առանձնակի կարևորվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության անցման պայմաններում 6-6.5 տարեկաններին տարրական դպրոցին նախապատրաստելու հարցում, ինչը կապահովի երեխաների համար հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար, կնպաստի երեխայի արագ հարմարվելուն և ուսման մեջ առաջընթաց ունենալուն, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծի նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար: Ոստի նախադպրոցական կրթության ռազմավարական ծրագրով նախատեսվում է նախադպրոցական ավագ տարիքի երեխաների համար նախադպրոցական կրթությունը դարձնել համընդհանուր՝ ապահովելով ընդգրկվածության աստիճանական աճ, և ծրագրային ժամանակահատվածի վերջում (2016թ.) հասցնելով ընդգրկվածությունը շուրջ 90 տոկոսի:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Ռազմավարական ծրագրի փորձնական փուլը (այսուհետ՝ Փորձնական ծրագիր) իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում և ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում: Փորձնական ծրագիրը տևել է մեկ տարի, և վերջինիս

...պահանջման համար «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի վարկային միջոցներից հատկացվել է շուրջ 198.0 հազար ԱՄՆ դոլար:

Փորձնական ծրագիրը հիմնականում նպատակաուղղված է.

- նախադպրոցական կրթական ծառայություններում երեխաների ընդգրկվածության աճին,
- նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանը,
- այլընտրանքային քիչ ծախսատար նախադպրոցական ծառայությունների ներդրմանը,
- ծնողների և համայնքների մասնակցության բարձրացմանը:

Փորձնական ծրագրի իրականացման համար տարածաշրջանների ընտրությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության, Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան մարզպետարանների կողմից վերցված՝ ըստ քաղաքային և գյուղական համայնքների նախադպրոցական հաստատությունների թվի, դրանցում երեխաների ընդգրկվածության ցուցանիշների (մասնավորապես ավագ տարիքային խմբի) ուսումնասիրության և գնահատման հիման վրա: Ըստ այդ վերլուծությունների՝ ընտրվել են Ախուրյանի և Սպիտակի տարածաշրջանները՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով.

- Շիրակի մարզում, բացառությամբ Գյումրի քաղաքի, նախադպրոցական հաստատություններում ավագ տարիքային խմբի երեխաների՝ 5-6 տարեկանների ընդգրկվածությունը հանրապետությունում ամենացածրերից է: Մարզի 119 համայնքից 95 համայնքում մանկապարտեզներ չկան: Ախուրյանի տարածաշրջանի 32 համայնքից միայն 4 համայնքում են գործում նախադպրոցական հաստատություններ (6 մանկապարտեզ), որոնցում ընդգրկված են նախադպրոցական տարիքային խմբի երեխաների 9.4 %-ը :
- Լոռու մարզն ընդգրկված է սոցիալապես առավել անապահով 5 մարզերի թվում և այնտեղ նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածությունն ամենացածրերից մեկն է հանրապետությունում: Սպիտակի տարածաշրջանը միակն է հանրապետությունում, որտեղ ոչ մի գյուղական համայնքում չի գործում նախադպրոցական հաստատություն: Սպիտակի տարածաշրջանում նախադպրոցական հաստատություններում նախադպրոցական տարիքային խմբի երեխաների ընդգրկվածությունը, մոտավոր գնահատմամբ կազմում է 8.7 %:

Այդ ցուցանիշների վերլուծության հիման վրա վերհանվել են նաև Ախուրյանի և Սպիտակի տարածաշրջանների նախադպրոցական կրթության հիմնախնդիրները, կատարվել են փորձնական ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների մոտավոր գնահատում:

Փորձնական ծրագրի շրջանակներում իրականացվող նախադպրոցական կրթության ծրագրերն ուղղված են երեխայի համակողմանի զարգացման համար պայմանների ստեղծմանը և դպրոցին նախապատրաստելուն աջակցմանը: Փորձնական ծրագրով

առաջարկվել են նախադպրոցական ծրագրերի կազմակերպման ներքոնշյալ 3 հիմ... մոդելները.

<u>ա) Դպրոցներում 1-ամյա կամ երեքամսյա</u> նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում.

Այս մոդելով ծրագրեր իրականացվում են այն համայնքներում, որտեղ չկան կամ չեն գործում նախադպրոցական հաստատություններ, ուստի նախադպրոցական խմբերը բացվում են համայնքի հանրակրթական դպրոցներում: Դպրոցը նախադպրոցական ծրագրի համար տրամադրում է դասասենյակներ, որում ստեղծվում են համապատասխան պայմաններ՝ հնարավորինս մոտ ընտանեկանին: Ստեղծված միջավայրը նպաստում է երեխայի ազատ և դինամիկ շարունակական զարգացմանը, մտավոր, ֆիզիկական և ստեղծագործական կարողությունների լիարժեք դրսևորմանը: Արդյունքում, ծրագրում ընդգրկված երեխաները զարգացնում են իրենց ինքնուրույն ստեղծագործական կարողությունները, ձեռք են բերում համագործակցելու և թիմով աշխատելու հմտություններ, կարողանանում են կազմակերպել իրենց առօրյան և պատրաստ են լինում դպրոցին: Մոդելի առավելությունն այն է, որ այն հիմնվում է դպրոցների առկա ցանցի վրա և հեշտությամբ կարող է իրականացվել գյուղական բնակավայրերում: Մոդելը արդյունավետ է և քիչ ծախսատար, քանի որ կազմակերպվում են 3-3.5 ժամյա տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայություններ՝ առանց տաք սենդի և քնելու (նախաճաշը երեխաները կարող են բերել իրենց հետ կամ կարող են գտնվել երեխաներից մեկանգամյա սենդով ապահովման այլ լուծումներ):

<u>բ) Մանկապարտեզներում 1-ամյա</u> նախադպրոցական կրթական ծրագրերի կազմակերպում ավագ տարիքային խմբի երեխաների համար՝ նոր խմբերի բացման կամ թերկոմպլեկտավորված խմբերի լրացման միջոցով.

Այս մոդելով կազմակերպվում են 1-ամյա նախապատրաստական ծրագրեր գործող նախադպրոցական հաստատություններում: Այս մոդելով կազմակերպվող ծրագիրը նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը և տալիս է հիմնական նախադպրոցական գիտելիքներ այն երեխաներին, որոնք դրանից առաջ որևէ նախադպրոցական հաստատություն չեն հաճախել: Մոդելը արդյունավետ է և քիչ ծախսատար (տաք սնունդ չի տրվում և քուն չի նախատեսվում), քանի որ երեխաները մանկապարտեզ են հաճախում կարճ ժամանակահատվածով (օրական 3-3,5 ժամ): Այն հեշտությամբ կարող է իրականացվել գյուղական վայրերում: Մոդելի առավելությունն այն է, որ հիմնվում է նախադպրոցական հաստատությունների առկա ցանցի վրա: Այն համայնքներում, որտեղ նախադպրոցական ավագ խումբը թերբեռնված է, նպատակահարմար է ավելացնել երեխաների ընդգրկվածությունը գործող խմբում՝ ներգրավելով լրացուցիչ երեխաներ: Դրանով էապես նվազում են լրացուցիչ ծախսերը (հիմնական մանկավարժին լրացուցիչ վճարում չի նախատեսվում, այլ նախատեսվում է մեկ օգնական՝ կես դրույքով):

<u>գ) Կրթամշակութային այլ հաստատությունների հիմքի վրա</u> նախադպրոցական կրթության ծրագրերի կազմակերպում.

երեխաների անվտանգ վարքագծի, ինքնուրույնության, մեծերի և հասակակիցն
փոխհարաբերության դաստիարակության ուղղությամբ, որը դարոցական կյան
նախապատրաստվելու կարևոր պայման է:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՈՉԸՆԴՈՏԵՐԸ (ՌԻՍՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ) ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐՄԱՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Փորձնական ծրագրի ընթացքում միկրոծրագրերի ղեկավարների (հաստատությունների տնօրենների), մանկավարժ-դաստիարակների, ծնողների հետ պարբերաբար ունեցած հանդիպումների և քննարկումների ընթացքում վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ: Դրանց գերակշիռ մասը ֆինանսական բնույթի խնդիրներ են՝ կապված միկրոծրագրերով նախատեսված համայնքային և ծնողական ներդրումների ապահովման հետ:

Նախքան միկրոծրագրեր իրականացնող հաստատությունների հետ պայմանագրերի կնքումը բոլոր համայնքների ղեկավարների կողմից տրվել են գրավոր համաձայնություններ՝ միկրոծրագրերի բյուջեներով նախատեսված համայնքային ներդրումների կատարման մասին: Սակայն ծրագրերի իրականացման ընթացքում գրեթե բոլոր միկրոծրագրերում (հատկապես հանրակրթական դպրոցների հիմքի վրա իրականացվող) համայնքային ներդրումներն իրականացվել են մեծ դժվարություններով, երբեմն նաև՝ ծրագրով նախատեսված չափերից և ժամկետներից շեղումներով: Դա հիմնականում բացատրվել է համայնքային բյուջեների սահմանափակ հնարավորություններով, ինչպես նաև համայնքներում առկա հրատապ լուծում պահանջող խնդիրների՝ ըստ առաջնահերթության դասակարգմամբ: Համայնքների մեծ մասի բյուջեներում նախադպրոցական միկրոծրագրերի համապատասխան ծախսերի ֆինանսավորման նպատակով անհրաժեշտ միջոցներ չնախատեսելու պատճառով՝ միկրոծրագրերի ընթացիկ ծախսերի զգալի մասը (մասնավորապես՝ դաստիարակի աշխատավարձի վճարումը, կոմունալ ծախսերը, որոշակի քանակությամբ գրենական պիտույքների ձեռքբերման ծախսերը) իրականացվել են ծնողների կողմից հավաքվող ամսական վարձավճարների հաշվին՝ մեծացնելով ծնողների վրա ընկնող ֆինանսական բեռը:

Նկատի ունենալով այն, որ միկրոծրագրերով համայնքային ներդրումների զգալի մասը նախատեսվում է ուղղել դաստիարակի աշխատավարձի վճարմանը, ապա համայնքային ներդրումների բացակայությունը կամ դրանց ոչ բավարար չափով ֆինանսավորումը լուրջ խոչընդոտ են հանդիսանում թե գործող միկրոծրագրերի հետագա տարիներին շարունակականության ապահովման, և թե հետագայում մյուս մարզերում նախադպրոցական կրթության ընդլայնման հարցում:

Բացի այդ, պարբերական այցերի միջոցով, կրթադաստիարակչական աշխատանքների դիտարկման ընթացքում պարզվել է նաև, որ նախադպրոցական կրթական ծրագրերի իրացման, ուսուցման և դաստիարակության մեթոդների կիրառման հարցում առավել հմուտ և արդյունավետ են աշխատում նախադպրոցական մասնագիտական

գրեխաների ընդգրկվածության նախորդ տարիների ցուցանիշների համեմատ՝ Փորձնական ծրագրի արդյունքում Ախուրյանի տարածաշրջանում ավագ տարիքի երեխաների ընդգրկվածությունն աճել է շուրջ 117 տոկոսով, իսկ Սպիտակի տարածաշրջանում՝ շուրջ 130.0 տոկոսով: Ընդհանուր առմամբ, Փորձնական ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ Շիրակի մարզում նախադպրոցական ավագ տարիքի երեխաների ընդգրկվածությունն աճել է շուրջ 10.3 տոկոսով, իսկ ՀՀ Լոռու մարզում՝ շուրջ 16 տոկոսով: Թեև նախադպրոցական հաստատություններում ավագ տարիքի երեխաների ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը, ըստ մարզերի ներկայացրած տվյալների, ներկայումս անցնում է 50 տոկոսի սահմաններից, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ ընդգրկվածության աճը հիմնականում կատարվում է ի հաշիվ Երևան քաղաքի և մարզերի քաղաքային բնակավայրերի նախադպրոցական հաստատությունների ընդգրկվածության մեծացման, քանի որ ներկայումս հանրապետության շուրջ 413 համայնքներում ընդհանրապես չկան մանկապարտեզներ, իսկ շուրջ 200 համայնքում կան մանկապարտեզի շենքեր, սակայն չեն գործում:

Փորձնական ծրագրի իրականացման շրջանակներում, կրթական ծառայությունների այլընտրանքային մոդելների կիրարկման նպատակով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 22.09.2009թ N 765-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակվել և ներդրվել է փորձնական փուլի իրականացման ուղեցույց, որով ղեկավարվել են փորձնական ծրագրեր իրականացնող հաստատությունները: Ուղեցույցը ներառում է կրթական ծրագրի իրականացման բովանդակային, մեթոդական բաղադրիչները, ինչպես նաև այլընտրանքային մոդելների կազմակերպման նորմատիվային, իրավական, ֆինանսական հիմքերը:

Բոլոր հաստատություններին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բաշխվել են ծրագրամեթոդական գրականություն, ուսումնամեթոդական նյութեր:

Միաժամանակ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվել են Փորձնական ծրագրում ընդգրկված հաստատությունների թվով 59 մանկավարժ-դաստիարակների և ղեկավար կադրերի վերապատրաստումներ, տեսական և գործնական սեմինարներ:

Պարբերաբար, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի և Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի հետ համատեղ տեղերում իրականացվել են դիտարկումներ և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերվել հաստատություններին:

Դիտարկումների ընթացքում պարզվել է, որ կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում մանկավարժները պլանավորված աշխատանք են տանում երեխաների խոսքի, լեզվամտածողության, բառապաշարի հղկման ու հարստացման, կապակցված խոսք կառուցելու ունակության մշակման, նրանց մտավոր, ֆիզիկական, հմացական, զեղագիտական ընդունակությունների զարգացման ուղղությամբ: Համաձայն ծրագրային պահանջների՝ փոխներգործուն մեթոդներով աշխատանքներ են տարվել

գրություն կամ նախադպրոցական աշխատանքի փորձառություն ունեցող մանկավարժական կադրերը: Սեթոդամանկավարժական գործընթացում դժվարություններ ունեն հարակից մասնագիտական կրթություն ունեցող մանկավարժական կադրերը:

«ՀՀ նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիր» խնդիրների իրագործումն ապահովելու նպատակով և, միաժամանակ, հիմք ընդունելով Փորձնական ծրագրի արդյունքները, վերջինիս իրականացման ընթացքում բացահայտված հիմնական պրոբլեմները և շահագրգիռ կողմերի արված առաջարկությունները,

առաջարկվում է՝

ա) Շարունակել աջակցությունը նախադպրոցական ոլորտի ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացման և երեխաների ընդգրկվածության աճի մեծացման ուղղությամբ՝ աստիճանաբար ընդլայնելով Փորձնական ծրագիրը հանրապետության բոլոր մարզերում՝ ծախսախնայող մոդելների կիրառմամբ:

Հաշվի առնելով հանրապետությունում նախադպրոցական հաստատությունների անբավարար ցանցը և ծառայությունների անհավասար մատչելիությունը, հատկապես գյուղական բնակավայրերի երեխաների համար, անհրաժեշտ է կիրառել նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ և կատարել լրացուցիչ հատկացումներ՝ աղքատ մարզերին առանձնակի ուշադրություն դարձնելու պարագայում նախադպրոցական կրթության ծառայությունների ծավալները բոլոր մարզերում ընդլայնելու և ազգային ծրագրով սահմանված նպատակներն իրագործելու համար:

Այս խնդրի լուծմանն է ուղղված նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսվող հանրակրթական ոլորտի բարելավման ծրագրերի շարունակումը: Մասնավորապես, նախատեսվում է իրականացնել դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացմանը և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովմանն ուղղված ենթածրագիր, որի շրջանակներում հանրապետության տարբեր համայնքների մոտ 140 հաստատությունների կտրամադրվեն դրամաշնորհներ՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու համար, ինչպես նաև կիրականացվեն նախադպրոցական ծրագրեր իրականացնող հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացներ:

բ) Աշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ նախադպրոցական կրթության օրենսդրական դաշտի կատարելագործման և ոլորտի ֆինանսավորման սկզբունքների ու մեխանիզմների հստակեցման ուղղությամբ՝ ապահովելու նախադպրոցական կրթության համընդհանուր լինելու բնույթը:

Մասնավորապես առաջարկվում է ավագ տարիքի երեխաների համար նախադպրոցական կրթությունը «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով ամրագրել, որպեսզի յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա ստանալու նախադպրոցական կրթություն միասնական ծրագրով, անկախ այդ կրթական ծրագրերն

իրականացնող ուսումնական հաստատությունների տիպից, կրթության կազմակերպման վայրից և ծներից: Ըստ այդմ, պետք է մշակել նախադպրոցական կրթության ծրագրերն ֆինանսավորման տարբերակված մեխանիզմներ՝ կախված կրթական ծրագրերն իրականացնող ուսումնական հաստատությունների տիպից (համայնքային ենթակայության մանկապարտեզներում իրականացվող, հանրակրթական դպրոցներում կամ այլ վայրերում իրականացվող ծրագրեր):

գ) Ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ Փորձնական ծրագրի շրջանակներում իրականացված միկրոծրագրերի շարունակականության ապահովման համար: Մասնավորապես՝ առաջարկվում է հանրակրթական դպրոցների հիմքի վրա իրականացվող նախադպրոցական ծրագրերի շարունակականությունն ապահովելու նպատակով այդ ծրագրերում ընդգրկված երեխաների թիվը հաշվառել դպրոցի երեխաների թվի ընդհանուր համակազմում՝ վերջիններիս հաշվով ծախսերը ներառելով հանրակրթական դպրոցների ըստ աշակերտների թվի ֆինանսավորման ծախսերում:

դ) Պետական բյուջեում նախատեսել համապատասխան միջոցներ նախադպրոցական կրթության ծրագրերի ներդրումային ծախսերի մասով, իսկ համայնքային բյուջեներում՝ ընթացիկ ծախսերի մասով:

ե) Կազմակերպել պարբերական վերապատրաստման դասընթացներ (սեմինարներ) նախադպրոցական կրթության ծրագրերում ներգրավված մանկավարժների աշխատողների համար՝ երեխաների դաստիարակության և կրթության կազմակերպման նոր մեթոդների և ձևերի կիրառման ուղղությամբ:

զ) Համալրել նախադպրոցական ծրագրեր իրականացնող հաստատությունները նոր ուսումնամեթոդական գրականությամբ, ձեռնարկներով, ուսուցողական նյութերով և դիդակտիկ պարագաներով՝ վարկային և դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին: